10

Ձև 8

<< 13 >> դեկտեմբերի 2022թ. | Ք. Նոյեմբերյան (վայրը) | ոստ. Նոյեմբերյանի բաժին (ստորաբաժանման անվանումը)

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 94

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ոստիկանության Նոյեմբերյանի բաժնի պետ, ոստ. փոխգնդապետ Վ. Ա. Ազատյանս՝

(ստորաբաժանման անվանումը) (անուն,հայրանուն,ազգանուն)

քննելով << 28 >> նոյեմբերի 2022թ. թիվ 94 վարչական իրավախախտման վերաբերյալ ածանագրությունը և կից նյութերը՝

Պարզեցի, որ ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի Ալավերդի բնակավայրի Սանահին Սարահարթ 2 փողոց, շ. 31, բն. 3 հասցեի բնակիչ Կամո Հայկազի Սիմոնյանը՝ ծնվ. 09.03.1956թ., 2022 թվականի նոյեմբերի 28-ին ժամը 13.24-ին <<Ն. Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ>> ՓԲԸ-ի մուտքի դռան մոտ օգտագործել է ծխախոտ, որով խախտել է ,,Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխադրիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին,, ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի /Ծխախոտային արտադրատեսակների և ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործմանը ներկայացվող արգելքները և սահմանափակումները/ ներքոհիշյալ պահանջը՝

Արգելվում է ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների /բացառությամբ՝ բժշկական արտադրատեսակների փոխարինիչների/ օգտագործումը՝

Հետևյալ տարածքում՝

Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների շենքերում և դրանց մուտքերից ուղիղ գծով մինչև 5 մետր հեռավորության վրա:

Այսինքն Կամո Հայկազի Սիմոնյանը կատարել է արարք՝ նախատեսված ,,Վարչական իրավախախտումների վերաբերյալ,, ՀՀ օրենսգրքի 173.2 հոդվածով, այն է՝ օրենքով սահմանված ծխախոտային արտադրատեսակի կամ ծխախոտային արտադրատեսակի փոխարինիչների օգտագործման սահմանափակման արգելքը խախտելը, որն առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձի նկատմամբ՝ հիսնապատիկի չափով:

Որի համար, ղեկավարվելով վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 224 հոդվածով

ՈՐՈՇԵՑԻ

ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի Ալավերդի բնակավայրի Սանահին Սարահարթ 2 փողոց, շ. 31, բն. 3 հասցեի բնակիչ Կամո Հայկազի Սիմոնյանին ՎԻՎ ՀՀ օր-ի 173.2 հոդվածով նախատեսված զանցանք կատարելու փաստով ենթարկել վարչական տույժի՝ կիրառել տուգանք 50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամի չափով:

Ինձ բացատրվել է վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 288 հոդվածով սահմանված որոշման կարգը, որի համար ստորագրում եմ

_____ _____

ստորագրությունը անուն,ազգանուն,հայրանուն

Ստացա որոշման մեկ օրինակը՝<< >>_____2022թ. _____

ստորագրությունը

Կ.Տ.

Ոստ. Նոյեմբերյանի բաժնի պետ, ոստ. փոխգնդապետ՝ Վ. Ա. Ազատյան

ստորաբաժանման անվանումը ստորագրությունը անուն,հայրանուն,ազգանուն